

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ**ԱՅԼԵՒԱՅԼՔ****ՎԵՐԱՄՈՒՏ ՍՐԲՈՅ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ
2023 - 2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՈՅ**

Երկուշաբթի, 4 Սեպտեմբեր, 2023-ին, առաւօտեան ժամը 8:00-ին, Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեանի գլխաւորութեամբ ներկայ գտնուեցաւ Սրբոց Թարգմանչաց վարժարանի դպրոցական նոր տարեշրջանի վերամուտի հանդիսութեան: Այս տարի Սրբոց Թարգմանչաց վարժարանն ընդունեց 182 աշակերտ-աշակերտուհիներ:

Միաբանութեան ժամանելէն ետք վարժարանի սաները երգեցին Հայաստանի Հանրապետութեան օրհներգը եւ Սրբոց Թարգմանչաց վարժարանի հիմնը՝ «Որք զարդարեցին» շարականը, ապա վարժարանի տեսուչ՝ Արժանապատիւ Տ. Արտէն Քահանայ Աբրահամեան կատարեց իր բարիգալուստի խօսքը՝ աշակերտութեան յորդորելով ուսման մէջ ըլլալ բծախնդիր եւ հետեւողական, իսկ ուսուցիչներուն՝ համբերութիւն երեխաներու հետ աշխատելու ծանր պարտականութիւնը լաւագոյնս կատարելու համար: Ինչպէս նաեւ ուրախութեամբ յայտնեց, որ այս տարի «Ծիլ» դասարանի մէջ իրենց առաջին քայլերը պիտի ընեն 24 փոքրիկներ: Այսպիսի թիւ տարիներէ ի վեր չէր եղած:

Տէր Հօր խօսքէն ետք, հանդիսապետ Լուսարարապետ Սրբազան Հայրը ողջունեց ներկաները եւ քաջալերեց աշակերտները, որպէսզի ուսումնական տարին նոր եռանդով սկսին եւ ջամբուած գիտելիքները յօժարութեամբ իւրացնեն: Իր խօսքին մէջ Լուսարարապետ Սրբազան կարեւորեց ուսուցիչներու դերը դպրոցներէն ներս եւ ըսաւ. «Ճիշդ է, որ ուսուցչի պարտականութիւնը գիր-գրականութիւն սորվեցնել է, բայց միայն «Այբ, բեն, գիմ...» գիտնալը չի բաւէր մարդ ըլլալու համար: Ուսուցիչը կարեւոր պարտականութիւն մըն ալ ունի, ան պիտի կերտէ աշակերտ-աշակերտուհիին նկարագիրը եւ բարոյականը»: Իր խօսքի վերջաւորութեան, Սրբազան Հայրը յիշեց Կոմիտաս Վարդապետին խօսքը, որ առիթով մը ըսած է. «Ուսուցիչ-պարոններ եւ քոյրեր, զգուշութեամբ մօտեցէ՛ք դաստիարակութեան գործին, խիստ փափուկ պաշտօն մըն է ձերը: Դուք դաստիարակելու կոչուած էք սերունդ մը, որ ապագայ ազգն է: Սխալ ուղղութեամբ՝ ազգը կը խորտակէք»:

Սրբազան Հօր խօսքէն ետք, վարժարանի տեսուչ Տէր Հայրը «Սուրբ Խաչիւս» ըսաւ, իսկ Սրբազան Հայրը «Պահպանիչ»-ով օրհնեց աշակերտները եւ ուսուցիչները, ապա «Հայր մեր»-ով փակեց վերամուտի հանդիսութիւնը:

Հանդիսութենէն ետք հանդիսապետ Սրբազան Հայրը եւ հոգեւոր հայրերը այցեւեցին վարժարանի երրորդ յարկ, ծանօթացան կատարուած նորոգութիւններուն, ապա պատուուեցան Տեսչարանին մէջ:

ՎԵՐԱՄՈՒՏ ԺԱՌԱՆԳԱԿՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ 2023 - 2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՈՅ

Երեքշաբթի, 5 Սեպտեմբեր, 2023-ին, առաւօտեան ժամը 9-ին, կատարուեցաւ Պատրիարքութեան ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի 181-րդ ուսումնական տարեշրջանի վերաբացումը: Վերամուտի արարողութեան ներկայ էին Ս. Յակոբեանց Միաբանութեան անդամներ եւ ուսուցչական կազմը, գլխաւորութեամբ՝ Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեանի: Միաբանութիւնը դիմաւորուեցաւ վարժարանի քայլերգի՝ «Սիրտ ի սիրտ»-ի երգեցողութեամբ, ապա, ըստ աւանդութեան, ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի Տեսուչ՝ Հոգեշնորհ Տ. Գէորգ Արեղայ Հայրապատեան Աւետարանէն ընթերցաւ «Սերմնացանի» առակը: Աւետարանի ընթերցումէն յետոյ, Տեսուչ Հայր Սուրբը բարի գալուստի խօսքեր ըսաւ ներկաներուն, որմէ յետոյ հանդիսապետ Սրբազան Հայրը բարի երթ մաղթեց ժառանգաւոր սաներուն, շնորհաւորեց ուսուցիչները եւ մաղթեց անոնց համբերատար գործունէութիւն: Բացման հանդիսութենէն ետք Միաբանութիւնը եւ ուսուցչական կազմը պատուուեցան ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի ուսուցչարանին մէջ:

ԱՐՅԱԽԵԱՆ 44-ՕՐԵԱՅ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՅՔԻՆ ՎԻՐԱԿՈՐՈՒԱԾ ՀԵՐՈՍ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԽՈՒՄԲԻՆ ԱՅՅԸ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

Շաբաթ, 9 Սեպտեմբեր, 2023-ին, Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան հրաւերով եւ Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի պաշտպանութեան եւ անվտանգութեան հարցերու մշտական յանձնաժողովի եւ Հայաստանի Հանրապետութեան Պաշտպանութեան Նախարարութեան համագործակցութեամբ, Արցախեան 44-օրեայ պատերազմի ընթացքին, հայրենիքի պաշտպանութեան սուրբ գործը կատարելիս ծանր վիրաւորուած զինուորներու հինգերորդ խումբը ժամանեց Սուրբ Երկիր:

Երկուշաբթի, 11 Սեպտեմբեր, 2023-ի առաւօտեան, հերոս զինուորները առաջնորդութեամբ Հայաստանի Հանրապետութեան Զինուած ուժերու փոխ-առաջնորդ՝ Արժ. Տ. Ենովք Քահանայ Եսայեանի, Ազգային Ժողովի պաշտպանութեան եւ անվտանգութեան հարցերու մշտական յանձնաժողովի փորձագէտ՝ Աննա Եարմալոյեանի եւ պատերազմի բովով անցած բժիշկի մը յայցելեցին Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանին՝ ստանալու Նորին Ամենապատուութեան օրհնութիւնը:

«Ուխտագնացութիւն դէպի Երուսաղէմ» ծրագիրը շարունակական է:

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՍԵՊՏԵՄԲԵՐ 19-20 ԱՐՅԱԽԻ ՄԷՋ ԶՈՀՈՒԱԾ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒ ԵՒ ԽԱՂԱՂ ԲՆԱԿԻՉՆԵՐՈՒ ՀՈԳԻՆԵՐՈՒ ՀԱՆԳՍՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

23 Սեպտեմբեր, 2023-ին, առաւօտեան ժամը 8-ին Սրբոց Յակոբեանց Մայր տաճարին մէջ կատարուեցաւ Առաւօտեան ժամերգութիւն, ապա Սուրբ Գլխադրի մատրան

մէջ մատուցուեցաւ Սուրբ եւ Անմահ Պատարագ: Պատարագեց Հոգեշնորհ Տ. Խաղ Ծ. Վարդապետ Ճոնատուրեան:

Յաւարտ Սուրբ Պատարագի, նախագահութեամբ Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեանի, կատարուեցաւ Մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն Սեպտեմբեր 19-20 Ատրպէյճանական յարձակումներու հետեւանքով Արցախի մէջ զոհուած մեր քաջարի զինուորներու եւ խաղաղ բնակիչներու հոգիներու հանգստութեան համար:

ՎԱՐԱԳԱՅ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՏՕՆԸ ՅԵՏԱԶԳՈՒԱԾ, ՌԱՄԼԷԻ ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳԱՅ ՎԱՆՔ ԿԱՏԱՐՈՒԵԼԻՔ ՌԻԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆԸ ՉԵՂԱՐԿՈՒԱԾ

Սուրբ Երկրի մէջ տիրող պատերազմական իրավիճակին պատճառով Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր տնօրինութեամբ 7 Հոկտեմբեր, 2023-ին, Վարագայ Սուրբ Խաչի տօնին առիթով Սուրբ Յարութեան տաճարին մէջ կատարուելիք «Հրաշափառ»-ը եւ յաջորդ օրուան բոլոր արարողութիւնները յետաձգուեցան ցնոր տնօրինութիւն:

Նոյն օրը պարզ Երեկոյեան ժամերգութիւն կատարուեցաւ Սրբոց Յակոբեանց Մայր տաճարին մէջ, իսկ Կիրակի առտու Սուրբ Պատարագը եւս մատուցուեցաւ Մայր տաճարին մէջ:

Վարագայ Սուրբ Խաչի տօնին յատուկ «Հրաշափառ»-ը կատարուեցաւ յաջորդ շաբաթ, 14 Հոկտեմբեր, 2023-ին: Յետ Երեկոյեան ժամերգութեան եւ նախատօնակի կատարուեցաւ նաեւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր, տաճարէն ներս:

Տօնի առաւօտուն, 15 Հոկտեմբեր, 2023-ին, ժամը 06:30-ին, Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը Մայրավանքէն թափօրով անարգել մեկնեցաւ Սուրբ Յարութեան տաճար: Գողգոթայի՝ Քրիստոսի խաչելութեան Սուրբ Վայրին երկրպագելէ ետք, Հայոց Երկրորդ Գողգոթա վերնամաստան մէջ կատարուեցան Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւններ: Ժամը 10:00-ին, հանդիսապետութեամբ Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեանի, Միաբանութիւնը կատարեց իր երկրորդ մուտքը Սուրբ Յարութեան տաճար, ապա Քրիստոսի Սուրբ Գերեզմանին առջեւ կատարուեցաւ Ճաշու ժամերգութիւն եւ Սուրբ Գերեզմանին վրայ մատուցուեցաւ Սուրբ եւ Անմահ Պատարագ: Պատարագեց եւ քարոզեց Հոգեշնորհ Տ. Խաղ Ծ. Վարդապետ Ճոնատուրեան:

Նկատի առնելով պատերազմական իրավիճակը, ճամբաներու վտանգաւորութիւնը, չեղարկուեցաւ նաեւ 15 Հոկտեմբեր, 2023-ին Ռամէլի Ս. Գէորգայ վանք կատարուելիք ուխտագնացութիւնը:

«ՀՐԱՇԱՓԱՌ»

Ի ՊԱՏԻՒ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅՍ ՆՈՐԱԾ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐՈՒ

8 Հոկտեմբեր, 2023-ին, Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամներէն Հոգե-

Հնորհ Տ. Թէոդորոս Ծ. Վարդապետ Զաքարեան եւ Հոգեշնորհ Տ. Կորիւն Ծ. Վարդապետ Բաղդասարեան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ Սուրբ Տրդատ բաց խորանին մատուցուած Սուրբ եւ Անմահ Պատարագի ընթացքին, ի ներկայութեան ծովածաւալ հաւատաւորներու բազմութեան եւ եկեղեցական դասու Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսէն ընդունեցին եպիսկոպոսական ձեռնադրութիւն, իրենց օծակից ունենալով Իրաքի Հայոց թեմի առաջնորդ՝ Հոգեշնորհ Տ. Օշական Վարդապետ Կիւլիկիւեանը, ԱՄՆ Հայոց Արեւելեան թեմի առաջնորդ՝ Հոգեշնորհ Տ. Մեսրոպ Վարդապետ Պարսամեանը եւ Վիրահայոց թեմի առաջնորդ՝ Հոգեշնորհ Տ. Կիրակոս Վարդապետ Դաւթեանը:

Ձեռնադրութենէն յետոյ Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեան իր անդրանիկ պատարագը մատուցեց Մայր Աթոռի Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ, իսկ Գերաշնորհ Տ. Կորիւն Եպիսկոպոս Բաղդասարեան Մայր Աթոռի Սուրբ Յովհաննէս Մկրտիչ եւ Սուրբ Վարդան մատուռ-մկրտարանին մէջ: Պատրագէն անմիջապէս յետոյ նորաօծ եպիսկոպոսները այցելեցին Ամենայն Հայոց Հայրապետին եւ իրենց մատուցած եպիսկոպոսական անդրանիկ պատարագներու նշխարները յանձնեցին Նորին Սրբութեանը, ապա ստանալով Վեհափառ Հայրապետի օրհնութիւնը օրեր անց վերադարձան Սուրբ Երկիր՝ Մայրավանք:

17 Հոկտեմբեր, 2023-ին, առաւօտեան ժամը 10-ին, Սրբոց Յակոբեանց Մայր տաճարի գաւիթին մէջ նորաօծ Սրբազան Հայրերը շուրջառ, խաչ եւ գաւազան առնելով Սրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ Ժառանգաւոր սաներու ուղեկցութեամբ «Հրաշափառ»ով մուտք գործեցին Սրբոց Յակոբեանց Մայր տաճար: Սուրբ Գլխադրի սրբավարին իրենց ուխտն ու երկրպագութիւնը ընելէ յետոյ խնկարկեցին ներկաներուն, որմէ յետոյ Սրբազան Հայրերն առաջնորդուեցան Աւագ Խորանին առջեւ, ուր կարդացին «Ուրախ եղէ ես ոչք ասէին ցիս...» խրատը: Ապա Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեան «Առ դրան Սրբոյ Եկեղեցւոյ» աղօթքն ըսաւ, իսկ Գերաշնորհ Տ. Կորիւն Եպիսկոպոս Բաղդասարեան «Պահպանիշով» արձակեց ներկաները:

«Հրաշափառի» արարողութեան վերաջաւորութեան Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան ողջունեց նորաօծ եպիսկոպոսները, յայտնեց իր, Սրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ Ժողովուրդի ուրախութիւնը: Իր խօսքին մէջ Լուսարարապետ Սրբազան ըսաւ. «Ասիկա մեծ նշան մըն է, որ Աստուած տակաւին իր սէրը մեր նկատմամբ չէ պակսեցուցած: Ընտանիքի մը յաջողութիւնը եւ յարատեւութիւնը կը կայանայ նոր սերունդներ հասցնելու մէջ: Մեր գոյութիւնը, Սրբատեղեաց պահպանութիւնը, Սուրբ Աթոռոյս յարատեւութիւնը մեզմէ յետոյ շարունակելու համար սերունդներ պէտք է հասցնենք: Մեծապէս ուրախ ենք, սրտանց կը շնորհաւորենք մեր երկու եպիսկոպոսները եւ կը մաղթենք ուժ, կարողութիւն, որպէսզի նոյն հաւատքով, նոյն նուիրումով շարունակեն իրենց ծառայութիւնը մեր եկեղեցիին եւ անոր միջոցաւ մեր ազգին եւ մեր հայրենիքին, ինչպէս նաեւ նոր սերունդներ հասցնեն, որպէսզի իրենցմէ յետոյ ալ մնանք յաւիտեանս յաւիտենից»:

Ապա Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեան շնորհակալական խօսք րրաւ՝ ըսելով. «Սա պահուս ես եւ Կորիւն Սրբազան, ուխտ ըրինք այս Սուրբ Տաճարի կամարներուն ներքոյ: Աստուծոյ նախախնամութեամբ տասնեակ տարիներ առաջ այս նոյն Տաճարին մէջ ծունկի եկած էինք Աստուծոյ առաջ՝ երջանկայիշատակ Թորգոմ Պատրիարքի ձեռամբ ձեռնադրուելու Դպիր, Կիսասարկաւագ, Սարկաւագ, Կուսակրօն Քահանայ, ապա Նուրհան Սրբազանի ձեռամբ ստացանք վարդապետական աստիճան,

ծայրագոյն վարդապետական աստիճան եւ այսօր կրկին նոյն այս Տաճարին մէջ, Գըլ-խաղրի առաջ ծունկի եկանք ուխտ ընելու: Ինձի համար այս ծունկի գալը նշան մըն էր: Անկախ եկեղեցական աստիճանի բարձրացումէն մենք ծառաներ ենք Աստուծոյ, ծառաներ ենք դարձեալ ծունկի գալով, որովհետեւ այդ պատգամը կու գայ Աւետարանէն, մեր Տիրոջ խօսքէն. «Ով աւագ է, ան պէտք է ծառայ ըլլայ բոլորին» (Մատթ. Ի. 27-28): Ուրախ եմ, որ այսօր մեր այդ ուխտին, մեր այդ դաշինքին բոլորդ ներկայ էք՝ Սրբազան Հայր, Ձեր գլխաւորութեամբ, որպէս մեր աւագ եղբայր, նաեւ մեր միաբանակից եղբայրներու եւ մեր կրտսեր եղբայրներու:

Մեր վանքը, մեր Պատրիարքութիւնը մեծ մարմին մըն է, եւ ամէն մէկը այդ մարմինին մէջ իր պատուաւոր տեղն ունի: Կարելոր է, որ մամինն առողջ ըլլայ, հաստատ ըլլայ, եւ ամէն մէկ անդամ իր տեղը գիտնայ եւ գիտակցութեամբ, հաւատքով, նուիրումով իրեն տրուած պատասխանատուութիւնը կատարէ: Մեր կեանքին մէջ, դուք՝ բոլորդ, ձեր կարելոր տեղն ունիք, եւ մենք կը յաջողինք միայն այն ժամանակ, երբ դուք մեզի աջակից ըլլաք, զօրակից ըլլաք եւ ձեր աղօթքներով, ձեր ներկայութեամբ ամբողջացնեք այն մեծ առաքելութիւնը, այն մեծ կոչումը, որ դրուած է հայ հոգեւորականի վրայ Սուրբ Երկրին մէջ: Այս դժուար ժամանակներուն, թէ՛ Սուրբ Երկրին մէջ, թէ՛ Հայաստան աշխարհի մէջ, թէ՛ մեր Աթոռի մէջ այն տագնապները, որ այսօր մենք կ'ապրինք, միայն կրնանք յաղթահարել, այս փորձութիւններէն պատուով դուրս գալ միասնական ուժերով: Իմ կոչս ու խնդրանքս է ձեզի, որ բոլորդ միասին, ձեր կարգի, աստիճանի մէջ հաստատ ըլլաք եւ ինչպէս տարիներ շարունակ վանքի հովանաւորութեան ներքոյ մեր համայնքը, մեր ժողովուրդը ընտանիք կազմած են, ապրած են, այնպէս ալ այսօր շարունակեն մնալ այդ կոչումին մէջ, որովհետեւ Աստուած նաեւ իրենց կանչած է այս վանքը՝ մեր սրբատեղիները պահպանելու, հոգեւոր դասին աջակից ըլլալու:

Թող Աստուած զօրացնէ բոլորիս, ամէն մէկուս մեր կարգի եւ աստիճանի մէջ, ուժ եւ կարողութիւն տայ, շնորհ ընէ հաւատարիմ մնալու մեր ուխտին. Ամէն»:

Մայր Տաճարէն Գերաշնորհ Սրբազան Հայրերը Լուսարարապետ Սրբազան Հօր հանդիսապետութեամբ եւ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ Ժառանգաւոր սաներու թափօրով Սուրբ Աթոռոյս օրհներգի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան, ուր դիմաւորուեցան Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի կողմէ:

Լուսարարապետ Սրբազան Հօր «Պահպանիչ»-էն յետոյ Միաբանութիւնը եւ Սաղիմահայութիւնը աջհամբոյրի եւ շնորհաւորութեան մօտեցան նօրած Սրբազան Հայրերուն, որմէ յետոյ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեան Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոսի եւ Գերաշնորհ Տ. Կորին Եպիսկոպոսի նուիրեց եպիսկոպոսական ականակոռ մատանիներ եւ պանակէներ: Ապա տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

**ՍՈՒՐԲ ԵՐԿՐԻ ՊԱՏՐԻԱՐԺՆԵՐԸ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՊԵՏԵՐԸ
ԻՆՉՊԷՍ ՆԱԵՒ ՍՈՒՐԲ ԵՐԿՐԻ ԳԻՒԱՆԱԳԷՏՆԵՐԸ
ՀԱՄԱԽՄԲՈՒԱԾ ԵՆ ՅԱՆՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ**

Երկուշաբթի, 18 Դեկտեմբեր, 2023-ին, Երուսաղէմի Յունաց Պատրիարքարանին մէջ

տեղի ունեցաւ նշանակալից հանդիպում մը, որու ընթացքին Երուսաղէմի պատրիարքները եւ հոգեւոր պետերը, դեսպանները, գլխաւոր հիւպատոսները եւ դիւանագիտական առաքելութեանց ներկայացուցիչները հաւաքուած էին քննարկելու Կազայի մէջ տեղի ունեցող պատերազմին, Սուրբ Երկրին մէջ ծառացած մարտահրաւէրներուն եւ յատկապէս Սուրբ Ծննդեան տօներուն վերաբերող հրատապ հարցեր: Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմէ ժողովին ներկայ էր Դիւանապետ՝ Հոգեշնորհ Տ. Աղան Աբեղայ Գոգչեան:

Ժողովը բացաւ Յունաց Ամենապատիւ Տ. Թէոֆիլոս III Պատրիարք Սրբազան Հայրը յոյսի եւ հոգեւոր նշանակութեան պատգամով՝ վկայակոչելով Սուրբ Յովհաննէս Աւետերանի խօսքը, ապա կոչ ուղղեց կողմերուն զինադադար հաստատել Կազայի մէջ:

Անհանգստութիւն յայտնելով Սուրբ Երկրի մէջ Քրիստոնեաներու առջեւ ծառացած մարտահրաւէրներու, յատկապէս Հրեայ ծայրայեղական խումբերու համակարգուած յարձակումներու վերաբերեալ, Հոգեւոր պետերը կոչ ըրին պահպանել Երուսաղէմի բազմամշակոյթ, բազմազգ եւ բազմակրօն կարգավիճակը եւ ընդգծեցին քրիստոնէական թաղամասերու ապահով եւ անկորուստ պահպանման կարեւորութիւնը:

Քննարկումի առանցքային կէտերէն էր Սուրբ Ծննդեան միասնական ուղերձի ձեւակերպումն ու հաստատումը: Հոգեւոր պետերը խորհրդակցաբար ձեւակերպած են յոյս, խաղաղութիւն եւ հոգեւոր միասնութիւն արտայայտող ուղերձ մը՝ նպատակ ունենալով միասնականութիւն հաղորդել գալիք Սուրբ Ծննդեան տօնակատարութիւններուն:

Հոգեւոր պետերը նաեւ Իսրայէլի նախագահին միասին հանդիպելու կարեւոր որոշում առին, որուն նպատակն է լրջօրէն կրկնել Կազայի մէջ հրադադարի անյապաղ դադրեցման իրենց խնդրանքը եւ փոթորկալից իրավիճակի այս պայմաններու տակ խաղաղութիւն վերահաստատել:

Հասկնալով Կազայի մէջ օրէցօր աճող քաղաքացիական զոհերու տխուր իրականութիւնը՝ Հոգեւոր պետերը համաձայնեցան պահպանել փոխադարձ շնորհաւորական այցելութիւններու աւանդոյթը աւելի զուսպ եւ համեստ ձեւով: Այս որոշումը կ'արտայայտէ քրիստոնէական եկեղեցիներու դիրքորոշումը, մեղմել տօնական միջոցառումները՝ սգալով բոլոր կորուստներու համար:

Մեծ ակնածանքով քննարկուեցաւ նաեւ Բեթղեհէմի մէջ Սուրբ Ծննդեան տօնակատարութիւններու եւ Հոգեւոր պետերու մեծահանգէս երթը հաւատացեալներու հետ միասին դէպի Սուրբ Ծննդեան տաճար: Հատկանշական կէտը Հոգեւոր պետերու խընդրանքն էր Իսրայէլի կառավարութեան՝ արտօնել Հոգեւոր պետերուն եւ հոգեւորականներուն մուտքը Ռաքէլի գերեզմանի անցակէտէն, իսկ հաւատացեալ աշխարհականներու համար բանալ Իսրայէլի եւ Բեթղեհէմի անցակէտը (300 կոշուող դարպասը):

Հոգեւոր պետերու այս ժողովը ոչ միայն ընդգծեց նիստի հոգեւոր նշանակութիւնը, այլեւ ցոյց տուաւ խաղաղութեան քարոզչութեան խոր յանձնառութիւնը՝ ընդգծելով Կազայի մէջ մարդասիրական ճգնաժամի ծանրութիւնը:

Անդրադարձ եղաւ նաեւ եկեղեցապատկան գոյքի վրայ Իսրայէլական կառավարութեան կողմէ անօրէն կերպով պահանջուող հարկերու հարցին եւ միջազգային աջակցութեան անհրաժեշտութեանը՝ յաղթահարելու Սուրբ Երկրի քրիստոնեաներու մարտահրաւէրները: Ի պատասխան՝ Յորդանանի, ԵՄ-ի, Եգիպտոսի եւ Ֆրանսայի դի-

լանագիտական ներկայացուցիչներն իրենց աջակցությունը յայտնեցին՝ հաստատելով ներգրաւուածութեան եւ օգնութեան իրենց յանձնառութիւնը:

Անդրադարձ եղաւ նաեւ Հայոց Պատրիարքարանի՝ «Կովերու պարտէզ»-ին շուրջ տեղի ունեցող վերջին դէպերուն: Ներկաներուն յուզող բոլոր հարցերուն ի պատասխան՝ Սուրբ Աթոռոյս Դիւանապետ՝ Հոգեշնորհ Տ. Աղան Աբեղայ Գոգչեան իր խօսքին մէջ ընդգծեց. «Հայոց Պատրիարքարանը նախանձախնդիր է իր բոլոր կալուածներուն հանդէպ եւ պիտի պահէ ու պահպանէ յաւիտեան»:

Հանդիպման վերջաւորութեան վերստին շեշտուեցաւ հրադարարի հրատապութիւնը՝ Սուրբ Ծննդեան խաղաղ տօնակատարութիւնն ապահովելու համար եւ վերահաստատուեցաւ դիւանագիտական համագործակցութեան կարեւորութիւնը Սուրբ Երկրին մէջ առկայ մարտահրաւէրները դիմագրաւելու համար:

ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԻՐԱՒԱՏԷՐ ԵՐԵՔ ՀՈԳԵՒՈՐ ՊԵՏԵՐՈՒՆ՝

ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐՈՒ ԵՒ ՅԱՏԱԿԻ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Հինգշաբթի, 21 Դեկտեմբեր, 2023-ին, Հռոմի Սապիենզա համալսարանի հնագիտութեան բաժնի կողմէ Սուրբ Յարութեան Տաճարին մէջ կատարուող հնագիտական պեղումներու եւ յատակի նորոգութեանց աշխատանքներու վերաբերեալ տեղեկատուութիւն տրուեցաւ Սուրբ Յարութեան Տաճարի իրաւատէր երեք համայնքներու Հոգեւոր պետերուն եւ հոգեւորականներուն:

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցաւ Գերաշնորհ Տ. Թէոփորոս Եպիսկոպոս Զաքարեան, ընկերակցութեամբ Սուրբ Յարութեան Տաճարի տեսուչ՝ Հոգեշնորհ Տ. Սամուէլ Ծ. Վարդապետ Աղոյեանի, Սուրբ Աթոռոյս Աւագ Թարգման՝ Հոգեշնորհ Տ. Վազգէն Վարդապետ Ալէքեանի եւ Դիւանապետ՝ Հոգեշնորհ Տ. Աղան Աբեղայ Գոգչեանի (Տեղեկատուութիւնը տես էջ 421-422):

Պատրաստեց՝ ՆԵՐՍԵՃ ԱՔԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ

